

60 Առեալ Սարգսի զայն ձեռագիր
 Ի նոյն օրէ փոյթ լ' անձանձիր
 Տրամադրեալ զինչս իւր եւ զեր
 Հանդերձիւր գ^օնալ յօտար երկիր:

61 Եւ յամառան յամին փրկչի
 Հազար եւ եօթն հարիւրորդի
 Քառաներորդ եւ չորրորդի
 Յըզմիւռնիս անդէն փոխի:

62 Անտի յետոյ ճեպիւ լռիկ
 Չոգայր նաւու առ վէնէտիկ,
 Ուր դադարեալ կալնոյր բնիկ
 Զուարճութեամբ ոչ սակաւիկ:

63 Ունէր ընդ իւր յայնժամ ընկեր
 Զաշակերտն յար հօգեսէր
 Ըզթօհաննէս բաբուն եւ տէր,
 Որ հեղութեանն էր իսկ պատկեր:

64 Նոյն էր տեղեալ ըզմիւռնացի,
 Պարկեշտ, համեստ ծ^օնողաց սրդի,
 Վարուքն ազնիւ լ' առաքինի
 Եւ դրպրութեամբ գովութեամբ լի:

65 Որ եւ յետոյ ի Վիբանան
 Երթեալ նրստէր ի վանս յայն,
 Յոր Պատրիարզն է Վիլիկեան
 Ուղղափառաց աւքանազեան:

66 Յոր եւ ապա նա ձեռնադրի
 Արհի տեսուչ ուղղեալ հօտի,
 Տիգրանակերտ իմ քաղաքի
 Որ եւ Ամիթ իսկ անուանի: